ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1830-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ՏՐՎԱԾ N35/21 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Զանգակ» ՀՈԱԿ-ին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին Գյումրի քաղաքի Շահումյան փողոց №214/12 հասցեում մանկապարտեզի կառուցման համար 2021 թվականի հունիսի 18-ին տրվել է N35/21 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 12/տասներկու/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 3/երեք/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2021 թվականի հունիսի 18-ին տրված N35/21 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3/երեք/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1829-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11 -Ի N 1922-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Թելման Մխիթարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 12-ին N 9061 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2021 թվականի օգոստոսի 11-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Թելման Աշոտի Մխիթարյանին բարեկարգման և կանաչապատման նպատակով կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 1922-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2021 թվականի օգոստոսի 27-ի (գրանցված սեղանամատյանում N 5054) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 09092021-08-0229 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թելման Աշոտի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1828-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N 2818-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի <<Քաղաքացի Ժաննա Խաչիկի Ջոթյանին պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 5,3 քառակուսի մետր մակերեսով շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 19,81 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2818-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21/03/2023 թվականի ՆԿ-21032023-08-0126 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի <<Քաղաքացի Ժաննա Խաչիկի Ջոթյանին պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 5,3 քառակուսի մետր մակերեսով շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 19,81 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2818-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<19,81 (տասնինն ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<14,23 (տասնչորս ամբողջ քսաներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<5,3 (հինգ ամբողջ երեք տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<1,95 (մեկ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

20.07.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1827-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23 -Ի N 1283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 23-ի <<Քաղաքացի Ռոբերտ Կոստանի Սարուխանյանին պատկանող Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոց N 32 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 18,73 քառակուսի մետր մակերեսով շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 18,66 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1283-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 17/07/2023 թվականի N Կ-17072023-08-0117):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 23-ի <<Քաղաքացի Ռոբերտ Կոստանի Սարուխանյանին պատկանող Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոց N 32 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 18,73 քառակուսի մետր մակերեսով շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 18,66 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1283-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 1-ին կետում <<հողամասի>> բառից հետո լրացնել <<և նրա վրա առկա շինությունների>> բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1826Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՐԻՇԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գրիշա Հայրապետյանին (ՀՎՀՀ՝ 57327766, գրանցման ամսաթիվ՝ 25.05.2018 թ.) 2023 թվականի հուլիսի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 17-ին 14872-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գրիշա Հայրապետյանին Գյումրի քաղաքի Շչեդրինի 9/1 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գրիշա Հայրապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբեր 2023 թվականի № 1825Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 441.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0501-0003) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ գտնվող 441.07 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0501-0003) տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 4/5 ՀՈՂԱՄԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբեր 2023 թվականի N 1824-Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Կայուն ենթակառուցվածքների և « ՎԶԵԲ Կանաչ քաղաքներ » ծրագրի նախապատրաստման ղեկավար Լին Օ Գրադիի հրավերը, Արթուր Կարապետի Վարդանյանի 2023 թվականի հուլիսի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. « Գյումրու քաղաքային ճանապարհներ » ծրագրի փորձագետ Արթուր Կարապետի Վարդանյանին գործուղել Թայվան՝ Թայպեյ և Թայնան քաղաքներում կայանալիք ՎԶԵԲ էլ- շարժունակություն դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման ժամկետը 5 (հինգ) օր՝ 2023 թվականի հուլիսի 24-ից 28-ը ներառյալ:
3. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ընդունել ի գիտություն,որ գործուղման հետ կապված ծախսերը կատարվում է հրավիրող կողմի միջոցներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Կարապետի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2023 թվականի N 1823 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԺՊԻՏ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԵՎՀԱՏ ԽԱՉԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Արևհատ Խաչիկի Սահակյանի 2023 թվականի հուլիսի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ժպիտ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արևհատ Խաչիկի Սահակյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի հուլիսի 28-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2023 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 31-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Արևհատ Խաչիկի Սահակյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակ Աստղիկ Արամայիսի Գրիգորյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևհատ Խաչիկի Սահակյանին և Աստղիկ Արամայիսի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» «հոկտեմբեր» 2023 թվական N 1822-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 3420-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Սուսաննա Ստյոպայի Հակոբյանը (անձնագիր՝ 65 №7522706, տրված՝ 16.04.2019թ., ՆԳՆ 0904 կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 22-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 3420-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում Սուսաննա Ստեփանի Հակոբյանի հայրանունը «Ստյոպա»-ի փոխարեն գրվել է «Ստեփան» (հիմք՝ անձնագիր՝ 65 №7522706, տրված՝ 16.04.2019թ., ՆԳՆ 0904 կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Սուսաննա Ստյոպայի Հակոբյանի 2023 թվականի հուլիսի 18-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 15010 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 22-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 3420-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ Սուսաննա Ստեփանի Հակոբյանի անվանման մեջ՝ «Ստեփանի» բառը փոխարինել «Ստյոպայի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Ստեփանի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբեր 2023 թվականի N 1821-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին>> N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2023 թվականի օգոստոսի 29-ին ժամը 11:00-ին՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարությունների հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի 2023

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 20-ի N 1824 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայությունների գլխավոր մասնագետների խմբի 1-ին ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

N	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Պաշտոնի անձնագրի ծածկագիր	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ	3.1-2	Բաժնի առաջատար մասնագետը՝ 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով, 2) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը. 3) հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին, 4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, 5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար, 6) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքների կատարմանը. 7) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան, 8) մասնակցում է համայնքի սեփականություն համարվող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման աշխատանքների կատարմանը, 9) մասնակցում է հողի հարկի, գույքահարկի, աղբի (ֆիզիկական և իրավաբանական անձանց) վարձավճարի կտրոնների հաշվառման աշխատանքների կատարմանը, կատարում է կանխիկ գործարքներ (դրամական օգնություններ), 10) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Գյումրու համայնքապետարանի կարիքների համար, պարզեցված և բաց ընթացակարգերի միջոցով իրականացվող գնումների հայտարարությունները համապատասխան կայքերում հրապարակելու, ինչպես նաև կայացած ընթացակարգերի արդյունքում պայմանագրերի,	Բաժնի առաջատար մասնագետը՝ 1) ունի առնվազն միջնակարգ կրթություն, 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Եկամտահարկի մասին», «Գույքահարկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: 5) Առանց աշխատանքային ստաժի և փորձի:	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին նշագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**
2.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ	3.1-69	10) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Գյումրու համայնքապետարանի կարիքների համար, պարզեցված և բաց ընթացակարգերի միջոցով իրականացվող գնումների հայտարարությունները համապատասխան կայքերում հրապարակելու, ինչպես նաև կայացած ընթացակարգերի արդյունքում պայմանագրերի,		

			ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման, գնման պայմանագրերի կազմման աշխատանքներին, 11) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:		
Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը			Փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը
օրը՝ 2023 թվականի օգոստոսի 29-ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ			Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, սպասողների անձնագիրը և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից		2023 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 27-ի N 1824-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

N	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Պաշտոնի անձնագրի ծածկագիր	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի բաժնի առաջատար մասնագետ	3.1-67	Բաժնի առաջատար մասնագետը՝ 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով, 2) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը, 3) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին, 4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, 5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մուտ ընդունելության համար, 6) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, 7) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան, 8) կատարում է գովազդի համար նախատեսված գումարների հավաքագրման աշխատանքներ՝ հաշվի առնելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջները, 9) մասնակցում է բոլոր գովազդային նյութերի, ցուցանակների և ուրվանկարների, գովազդի միջոց հանդիսացող նյութերի առկայության և վիճակի ստուգման աշխատանքների կատարմանը, 10) մասնակցում է գովազդ տեղադրող իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պայմանագրերի պահանջների կատարման, վճարների, գովազդների ամբողջական տեսքի ապահովման աշխատանքների կատարմանը, 11) համապատասխան լիազորագրերի հիման վրա	Բաժնի առաջատար մասնագետը՝ 1) ունի առնվազն միջնակարգ կրթություն, 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: 5) Առանց աշխատանքային ստաժի և փորձի:	Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝ 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**

			գովազդատուների հետ կնքում է նոր պայմանագրեր, թարմացնում հին պայմանագրերը, 12) հայտնաբերում է ապօրինի գովազդատուներին, 13) մուտքագրում և եզրագրում է փաստաթղթերը սահմանված կարգով, 14) մասնակցում է բաժնի ներքին գործավարության փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքների կատարմանը, 15) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:		
Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը			Փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը
օրը՝ 2023 թվականի օգոստոսի 29 -ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ			Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, պաշտոնի անձնագիրը և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից		2023 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբեր 2023 թվականի N 1820-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 9/34 ՀԱՍՑԵԻ 69.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 9/19 հասցեի 299.0 (երկու հարյուր իննսունինը) քառակուսի մետր մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Մենուա Սերյոժայի Մկրտչյանին և Սիդա Կարենի Բաղդասարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11112019-08-0042 վկայական):

Քաղաքացի Սիդա Կարենի Բաղդասարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 9/34 հասցեի 69.0 (վաթսունինը) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 146-Ա որոշումը և քաղաքացի Սիդա Կարենի Բաղդասարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 26-ին N 10161 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Մենուա Սերյոժայի Մկրտչյանին և Սիդա Կարենի Բաղդասարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 9/19 հասցեի 299.0 (երկու հարյուր իննսունինը) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Գարեգին Նժդեհի փողոցի N 9/34 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 69.0 (վաթսունինը) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ հողամասի ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 471546 (չորս հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Մենուա Սերյոժայի Մկրտչյանի և Սիդա Կարենի Բաղդասարյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մենուա Սերյոժայի Մկրտչյանին և Սիդա Կարենի Բաղդասարյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբեր 2023 թվականի N 1819Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՇԱՐՔԻ N 4/1 ՀԱՍՑԵԻ 21.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (16.74 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 21.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲԻ ՏՈՒՐՉԱԿԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասի 3-րդ շարքի N 4/1 հասցեի 21.6 (քսանմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03052023-08-0021 վկայական):

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 133-Ա որոշումը և քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մարտի 24-ին N 5288 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասի 3-րդ շարքի N 4/1 հասցեի 21.6 (քսանմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (16.74 (տասնվեց ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 92146 (իննսուներկու հազար մեկ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանին:
2. Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասի 3-րդ շարքի N 4/1 հասցեի 21.6 (քսանմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 40565 (քառասուն հազար հինգ հարյուր վաթսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գայանե Հակոբի Տուրզակլյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20» «հոկտեմբեր» 2023 թվական N 1818-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հուլիսի 14-ին, ժամը 11:30 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, 26 Կոմիսարների փողոց 58/4, անձնագիր՝ AV0325092 տրված 016-ի կողմից, ՀԾՀ 1914730216) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հուլիսի 03-ին կազմած՝ քաղաքացի Կարեն Յուրիկի Գաբրիելյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի հուլիսի 03-ին, ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանի, Մ.Վարդանյանի, Ա.Ղազարյանի, մասնակցությամբ՝ ՀՀ ՆԳՆ Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ՀՈԲ տեսուչ՝ կապիտան Կ.Ղանդիլյանի և ՀՀ ՆԳՆ Շիրակի մարզային վարչության պարեկային ծառայության գումարտակի 1-ին վաշտի 1-ին դասակի լեյտենանտ՝ Ժ.Եղիազարյանի կողմից կազմվել է արձանագրություն՝ այն մասին, որ քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանը Գյումրի քաղաքի Մայակովսկի փողոցում, ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր,

մասնավորապես՝ վաճառում է միրգ, բանջարեղեն, արարքը նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ ընդունում է այն փաստը, որ իր կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որի համար զղջում է, ինչպես նաև նշեց, որ պարտավորվում է բացառել՝ ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնել:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զղջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ ենթակետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը :

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացի Կարեն Յուրիկի Գաբրիելյանի կողմից վերացվել է իրավախախտման հետևանքները, քաղաքացի Կարեն Յուրիկի Գաբրիելյանը զղջում է կատարածի համար և պարտավորվում է բացառել՝ ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնել, գտնում եմ, որ վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3-րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293-րդ հոդվածի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանին իրազեկել՝ հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Կարեն Յուրիկի Գաբրիելյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբեր 2023 թվականի N 1817-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ N 96/9 ՀԱՍՑԵԻ 217.11 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան 1-ին թաղամասի N 96 հասցեի 220.0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասով բնակելի տունը պատկանում է քաղաքացի Ժենյա Սարգսի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27112012-08-0311 վկայական, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2022 թվականի հուլիսի 27-ին N 4807, սեփականության իրավունքի վկայագիր, տրված 2022 թվականի հուլիսի 27-ին N 4808):

Քաղաքացի Ժենյա Սարգսի Ղուկասյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29012020-08-0050 վկայական) Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 1-ին թաղամասի N 96/9 հասցեի 217.11 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 147-Ա որոշումը և քաղաքացիներ Ժենյա Սարգսի Ղուկասյանի և Հովհաննես Պարզիկի Ղուկասյանի դիմումները (մուտքագրված համայնքապետարանում 2019 թվականի սեպտեմբերի 27-ին N 13563 թվագրմամբ և 2023 թվականի մայիսի 11-ին N 8925 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Ժենյա Սարգսի Ղուկասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել իրեն պատկանող Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան 1-ին թաղամասի N 96 հասցեի 220.0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասով բնակելի տանը հարակից, Վազգեն Սարգսյան փողոց 1-ին թաղամասի N 96/9 հասցեի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 217.11 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 810 (ութ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 175859 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Ժենյա Սարգսի Ղուկասյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ժենյա Սարգսի Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հուլիսի 2023 թվականի N 1816-Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի հուլիսի 01-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 12-ին 14669 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրել (տեղաբաշխել) ավտոբուսային կանգառներին պաստառներ ընդհանուր 267 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հուլիսի 10- ից մինչև 2023 թվականի օգոստոսի 10-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

Ղեկավարի 2023 թ. հոկտեմբերի 19-ի

N 1816-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-Ի ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	Կանգառ/Հասցե	Քանակ	(քառ. մ)
1	Անկախության փողոց	2	24
2	Հաղթանակի պողոտա	2	28
3	Բագրատունյաց հր. Կիրովի կողմ	2	14
4	Տերյան փողոց (Տիգրան Մեծ ռեստորանին հարակից)	1	7
5	Տերյան փողոց (Զիթողցոնց տուն-թանգարանին հարակից)	1	9
6	Տերյան փողոց (Զիթողցոնց տուն-թանգարանին հարակից)	1	7
7	Մուսայելյան փողոց (Պեգաս և Կառոնա սուպերմարկետների դիմաց)	1	14
8	Մուսայելյան փողոց (Կառոնա սուպերմարկետների դիմաց)	1	7
9	Վազգեն Սարգսյան (19 դպրոցի դիմաց)	1	9
	Վազգեն Սարգսյան (ՀՊՏՀ ԳՄ-ի դիմաց)	1	14
	Վազգեն Սարգսյան (ՀՊՏՀ ԳՄ-ի դիմացի մայթ)	1	9
	Երկաթգծի կայարանի դիմաց (Թուրվանդ և Բասեն սուպերմարկետի դիմաց)	1	9
10	Երկաթգծի կայարանի դիմաց	1	9
11	Տիգրան Մեծ (Բասեն սուպերմարկետի դիմացի մայթ)	1	9
12	Շիրակացի փողոց	2	18
	ԸՆԴԱՄԵՆԸ	19	187

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ		
1	Սայաթ- Նովա փողոց	20	80
	ԸՆԴԱՄԵՆԸ	20	80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2023 թվականի N 1815 Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի հուլիսի 10-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 12-ին 14667 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Ալ. Մանուկյան հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 20 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հուլիսի 10- ից մինչև 2023 թվականի օգոստոսի 10-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2023 թվականի N 1814-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ №1/25 ՀԱՍՑԵԻ 79.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի № 1/25 հասցեի 79.96 (յոթանասունինն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի № 1/25 հասցեի 79.96 (յոթանասունինն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2023 թվականի № 813-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 83,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0098-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Խորենացու փողոցի հարևանությամբ գտնվող 83,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0098-0001) տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 28/10 ՀՈՂԱՄԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» նոյեմբեր 2023 թվականի № 1812-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 8/11 (ՎԿԱՅԱԿԱՆ №04042019-08-0034) ԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 8/26 (ՎԿԱՅԱԿԱՆ №12072023-08-0035) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքաց Վահրամ Աղաբաբյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14705 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Գործարանային փողոց 8/11 (վկայական №04042019-08-0034) և Գործարանային փողոց 8/26 (վկայական №12072023-08-0035) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 22 ՀՈՂԱՄԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2023 թվականի N 1811-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԱՐՏՈՒՇԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 59-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով և հիմք ընդունելով Աշոտ Արտուշի Խաչատրյանի 2023 թվականի հուլիսի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշոտ Արտուշի Խաչատրյանին ազատել զբաղեցրած պաշտոնից 2023 թվականի հուլիսի 20-ից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Արտուշի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հուլիսի 2023 թվականի N 1810-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՄԵՆ ՌԱՖԻԿԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի աշխատանքային պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Արմեն Ռաֆիկի Գալոյանին՝ 2023 թվականի հուլիսի 20-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Ռաֆիկի Գալոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.07.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2023 թվականի N 1809-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 1169-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Ա.Ավագյանի գրությունը ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքապետարանում մուտքագրված թիվ 14873 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 27-ի «Խնամակալություն սահմանելու և քաղաքացի Անուշ Կառլենի Այվազյանին իր որդու՝ Վաղարշակ Ստեփանի Հակոբյանի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ» թիվ 1169-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2023 թվականի N 1808-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՑՎԱԾ 127.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 383.17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ 383.17(երեք հարյուր ութսուներեք ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցվել է 127.78(հարյուր քսանյոթ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Հակոբ Սուրենի Հովհաննիսյանը:

Քաղաքացի Հակոբ Սուրենի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023YRNNAU ծածկագիրը և քաղաքացի Հակոբ Սուրենի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականին N18218 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Հակոբ Սուրենի Հովհաննիսյանի (ծնված 1959 թվականի ապրիլի 04-ին) սեփականության իրավունքը Սավոյան փողոցի հարևանությամբ գտնվող 383.17(երեք հարյուր ութսուներեք ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 127.78(հարյուր քսանյոթ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հակոբ Սուրենի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից :

19.07.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի